

ԿԱՆՈՒՆ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 18 Փետրոս 2018

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

Բ. ՔԱՌԱՄՆՈՐԴԱՅ /ԹԻԻ 46

SUNDAY, February 18, 2018

SUNDAY OF EXPULSION

**2nd Sunday of the Period Great Lent /
NO. 46**

TODAY'S BIBLE READINGS

Romans 12:1-13:10 / Matthew 5:17-48 /

Պատարագիչ՝

ԱՐՇ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՉՆՅ. ՔԵՐԿԱՆՃԵԱՆ

Հոգևոր Հովիւ

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA ERVANJYAN

Pastor

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjan

Choirmaster: Mr. Murat Demirdogen

Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՀՈՍԱԷԱՑԻՆԵՐՈՒՆ 12.1-13.10

1 Ուրեմն կ'աղաչե՛մ ձեզի, եղբայրնե՛ր, Աստուծոյ կարեկցութեամբ, որ ձեր մարմինները ներկայացնէք որպէս ապրող զոհ մը՝ սուրբ, աստուածահաճոյ. ա՛յդ է ձեր բանական պաշտամունքը: 2 Եւ մի՛ համակերպիք այս աշխարհին, հապա փոխակերպուեցէ՛ք ձեր միտքին նորոգութեամբ, որպէսզի քննէք թէ ի՛նչ է Աստուծոյ կամքը, որ բարի, հաճելի եւ կատարեալ է: 3 Քանի որ ինձի տրուած շնորհքով կ'ըսեմ ձեզմէ ամէն մէկուն, որ իր մասին աւելի բարձր համարում չունենայ՝ քան ինչ որ պէտք է մտածէ, հապա խոհեմութեա՛մբ մտածէ, հաւատքի չափին համեմատ՝ որ Աստուած բաշխած է իւրաքանչիւրին: 4 Որովհետեւ ինչպէս մէկ մարմինի մէջ ունինք շատ անդամներ, եւ այդ բոլոր անդամները միեւնոյն պաշտօնը չունին, 5 նոյնպէս մենք՝ շատ ըլլալով՝ մէկ մարմին ենք Քրիստոսով, եւ իւրաքանչիւրս՝ իրարու անդամներ: 6 Ուստի՝ ունենալով շնորհներ, որոնք կը տարբերին այն շնորհքին համեմատ՝ որ մեզի տրուած է, եթէ մարգարէութիւն է՝ մարգարէանա՛նք հաւատքին համեմատութեամբ, 7 եթէ սպասարկութիւն՝ սպասարկե՛նք. ա՛ն որ կը սորվեցնէ՝ թող յարատեւ սորվեցնելով, 8 ա՛ն որ կը յորդորէ՝ յորդորելով. ա՛ն որ կը բաշխէ՝ թող յարատեւ պարգամտութեամբ, ա՛ն որ վերակացու է փութաջանութեամբ, ա՛ն որ կ'ողորմի՝ ուրախութեամբ:

9 Սէրը թող ըլլայ առանց կեղծիքի. չարէն զգուեցէ՛ք, բարիին՝ յարեցէք: 10 Իրարու հանդէպ գորովալի՛ց եղէք՝ եղբայրական սիրով. պատուելու մէջ՝ զիրա՛ր գերադասեցէք: 11 Փութաջանութեան մէջ ծոյլ մի՛ ըլլաք. եռանդո՛ւն հոգիով Տէրոջ ծառայեցէք: 12 Յոյսով ուրախացէք. տառապանքի մէջ համբերեցէ՛ք. աղօթքի մէջ յարատեւեցէ՛ք: 13 Սուրբերու կարիքներուն հաղորդակի՛ց եղէք. հիւրասիրութեան հետամո՛ւտ եղէք:

14 Ձեզ հալածողները օրհնեցէ՛ք. օրհնեցէ՛ք եւ մի՛ անիծէք: 15 Ուրախացողներուն հետ ուրախացէ՛ք, ու լացողներուն հետ լացէ՛ք: 16 Իրարու հանդէպ միեւնո՛յն մտածումը ունեցէք: Բարձր բաներու վրայ մի՛ մտածէք, հապա խոնարհեցէ՛ք դէպի նուաստները. դուք ձեզ իմաստուն մի՛ սեպէք: 17 Չարիքի փոխարէն չարիք մի՛ հատուցանեցէք ոեւէ մէկուն. մտադրեցէ՛ք ընել ինչ որ պարկեշտ է բոլոր մարդոց առջեւ: 18 Որչափ կարելի է ձեզի՝ խաղաղութի՛ւն պահեցէք ամէն մարդու հետ: 19 Սիրելիներ, վրէժխնդիր մի՛ ըլլաք դուք ձեզի համար, հապա տե՛ղ տուէք Աստուծոյ բարկութեան. որովհետեւ գրուած է. «Վրէժխնդրութիւնը ի՛մս է, ե՛ս պիտի հատուցանեմ,- կ'ըսէ Տէրը»:

20Ուրեմն «Եթէ քու թշնամիդ անօթեցած է՝ սնուցանէ՛ գայն, ու եթէ ծարաւցած է՝ խմցո՛ւր անոր. քանի որ այսպէս ընելով՝ կրակի կայծեր պիտի կուտակես անոր գլուխին վրայ»։ **21**Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարին՝ վ յաղթէ չարին։

13.1Ամէն անձ թող հպատակի իր վրայ եղած իշխանութիւններուն. որովհետեւ չկայ իշխանութիւն մը՝ որ Աստուծմէ չըլլայ, եւ անոնք որ կան՝ կարգուած են Աստուծմէ։ **2**Յետեւաբար ո՛վ որ կ'ընդդիմանայ իշխանութեան, կը դիմադրէ Աստուծոյ կարգադրութեան. եւ անոնք որ կը դիմադրեն՝ իրենք զիրենք կը դատապարտեն՝։ **3**Քանի որ իշխանները՝ բարի գործերու համար վախ չեն ազդեր, հապա՝ չար գործերու։ Ուստի կ'ուզե՛ս չվախնալ իշխանութենէն. բարի՛ն գործէ, եւ գովեստ պիտի ընդունիս անկէ։ **4**Որովհետեւ ան Աստուծոյ սպասարկուն է քեզի համար՝ որ բարի՛ն գործես. բայց եթէ չա՛րը գործես՝ վախցի՛ր, քանի որ զուր տեղը չէ որ սուր կը կրէ մէջքը. որովհետեւ Աստուծոյ սպասարկուն է, եւ վրէժխնդիր՝ բարկութիւն հասցնելու անոր վրայ՝ որ չարիք կը գործէ։ **5**Ուստի հա՛րկ է հպատակիլ. ո՛չ միայն բարկութեան համար, այլ նաեւ խղճմտանքի համար։ **6**Այս պատճառով է որ տուրք ալ կը վճարէք. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեաներն են՝ բուն այս բանին յատկացուած։ **7**Ուրեմն հատուցանեցէ՛ք բոլորին ինչ որ կը պարտիք. որո՛ւն որ տուրք տրուելու է՝ տուրքը, որո՛ւն որ մաքս՝ մաքսը, որո՛ւն որ վախ՝ վախը, որո՛ւն որ պատիւ՝ պատիւը։

8Ո՛չ մէկ պարտք ունեցէք ոեւէ մէկուն, բացի զիրար սիրելէ. որովհետեւ ո՛վ որ կը սիրէ ընկերը՝ գործադրած կ'ըլլայ Օրէնքը։ **9**Արդարեւ այն ըսուածը. «Շնութիւն մի՛ ըներ, սպանութիւն մի՛ ըներ, գողութիւն մի՛ ըներ, սուտ վկայութիւն մի՛ տար, մի՛ ցանկար», եւ եթէ կայ ուրիշ որեւէ պատուիրան՝ համառօտաբար կը բովանդակուի սա՛ խօսքին մէջ. «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ՝ պէս»։ **10**Սէրը ո՛չ մէկ չարիք կը գործէ իր ընկերին. ուրեմն սէ՛րն է Օրէնքին գործադրութիւնը։

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 5.17-48

17«Մի՛ կարծէք թէ եկայ՝ ւարելու Օրէնքը կամ Մարգարէները։ Եկայ ո՛չ թէ ւարելու, հապա՝ գործադրելու։ **18**Որովհետեւ ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Մինչեւ որ երկինքն ու երկիրը անցնին, Օրէնքէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի՝ մինչեւ որ բոլորն ալ կատարուին”։ **19**Ուրեմն ո՛վ որ այս ամենափոքր պատուիրաններէն մէկը լուծէ եւ մարդոց ա՛յնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ. բայց ո՛վ որ գործադրէ ու սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ։

20Որովհետեւ կը յայտարարեմ ձեզի. “Եթէ ձեր արդարութիւնը չգերազանցէ դպիրներու եւ Փարիսեցիներու արդարութիւնը, բնա՛ւ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը”»։

21«Լսեր էք թէ ըսուեցաւ նախնիքներուն. “Մի՛ սպաններ”։ Ո՛վ որ սպաննէ, արժանի պիտի ըլլայ դատաստանի։ **22**Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ զուր տեղը բարկանայ իր եղբօր դէմ՝ արժանի պիտի ըլլայ դատաստանի։ Ո՛վ որ “ապուշ” ըսէ իր եղբօր՝ արժանի պիտի ըլլայ ատեանի դատապարտութեան։ Ո՛վ որ “յիմար” ըսէ իր

եղբոր՝ արժանի պիտի ըլլայ գեհենի կրակին”։ **23**Ուրեմն եթէ քու ընծադ գոհասեղանին վրայ բերես, ու հոն յիշես թէ եղբայրդ բա՛ն մը ունի քեզի դէմ, **24**հո՛ն ձգէ ընծադ՝ գոհասեղանին առջեւ. նա՛խ գնա՝ հաշտուէ՛ եղբորդ հետ, եւ ա՛յն ատեն եկուր՝ որ մատուցանես ընծադ։ **25**Շուտո՛վ համաձայնէ քու ոսոխիդ հետ, մինչ ճամբան ես անոր հետ, որպէսզի հակառակորդդ չյանձնէ քեզ դատաւորին, ու դատաւորը՝ ոստիկանին, եւ բանտը չնետուիս։ **26**Ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Բնա՛ւ դուրս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին նաքարակիտը”»։

27«Լսեր էք թէ ըսուեցաւ. “Շնութիւն մի՛ ըներ”։ **28**Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ կը նայի կնոջ մը՝ անոր ցանկալու համար, արդէ՛ն անիկա իր սիրտին մէջ շնութիւն ըրած է անոր հետ”։ **29**Ուստի եթէ աջ աչքդ կը գայթակղեցնէ քեզ, հանէ՛ զայն ու նետէ՛ քեզմէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՝ որ անդամներէդ մէկը կորսուի, բայց ամբողջ մարմինդ չնետուի գեհենը։ **30**Եթէ աջ ձեռքդ կը գայթակղեցնէ քեզ, կտրէ՛ զայն ու նետէ՛ քեզմէ. որովհետեւ աւելի օգտակար է քեզի՝ որ անդամներէդ մէկը կորսուի, ու ամբողջ մարմինդ չնետուի գեհենը»։

31«Նաեւ ըսուեցաւ. “Ո՛վ որ արձակէ իր կինը, թող տայ անոր ամուսնալուծումի վկայագիր մը”։ **32**Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Ո՛վ որ կ’արձակէ իր կինը՝ առանց պռոնկութեան պատճառի, ի՛նք շնութիւն ընել կու տայ անոր, եւ ո՛վ որ կ’ամուսնանայ արձակուածին հետ՝ շնութիւն կ’ընէ”»։

33«Լսեր էք դարձեալ թէ ըսուեցաւ նախնիքներուն. “Մուտ երդում մի՛ ըներ, հապա հատուցանէ՛ Տէրոջ ըրած երդումներդ”։ **34**Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Երբեք երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ՝ որ Աստուծոյ գահն է, **35**ո՛չ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ՝ որ Մեծ Թագաւորին քաղաքն է, **36**ո՛չ ալ գլուխիդ վրայ երդում ըրէ, որովհետեւ չես կրնար մէկ մագ ճերմկցնել կամ սեւցնել։ **37**Հապա ձեր խօսքը ըլլայ՝ այո՛ն՝ այո՛, եւ ո՛չը՝ ո՛չ. ասկէ աւելին յառաջ կու գայ Չարէն”»։

38«Լսեր էք թէ ըսուեցաւ. “Աչքի տեղ՝ աչք, եւ ակռայի տեղ՝ ակռայ”։ **39**Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Չարին մի՛ դիմադրեր. հապա ո՛վ որ ապտակէ աջ այտիդ, դարձո՛ւր անոր միւսն ալ։ **40**Եթէ մէկը ուզէ դատ վարել քեզի հետ ու բաճկոնդ առնել, թո՛ղ տուր անոր հանդերձդ ալ։ **41**Եւ ո՛վ որ ստիպէ քեզ մղոն մը երթալ, գնա՛ անոր հետ երկու մղոն։ **42**Տո՛ւր քեզմէ ուզողին, ու երես մի՛ դարձներ անկէ՝ որ կ’ուզէ փոխ առնել քեզմէ”»։

43«Լսեր էք թէ ըսուեցաւ. “Միրէ՛ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ”։ **44**Բայց ես կը յայտարարեմ ձեզի. “Միրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարի՛ք ըրէք անոնց՝ որ կ’ատեն ձեզ, եւ աղօթեցէ՛ք անոնց համար՝ որ կը պախարակեն ու կը հալածեն ձեզ, **45**որպէսզի ըլլաք ձեր երկնաւոր Հօր որդիները. որովհետեւ իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ, եւ անձրեւ կը դրկէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ անարդարներուն վրայ։ **46**Որովհետեւ եթէ դուք սիրէք ձեզ սիրողները, ի՛նչ վարձատրութիւն կ’ունենաք. մաքսաւորներն ալ նոյնը չե՛ն ըներ։ **47**Ու եթէ բարեւէք միայն ձեր եղբայրները, ի՛նչ աւելի կ’ընէք ուրիշներէն. մաքսաւորներն ալ նոյնը չե՛ն ըներ։ **48**Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է”»։

Romans 12.1-13.10

12 I beseech you therefore, brethren, by the mercies of God, that ye present your bodies a living sacrifice, holy, acceptable unto God, which is your reasonable service. **2** And be not conformed to this world: but be ye transformed by the renewing of your mind, that ye may prove what is that good, and acceptable, and perfect, will of God. **3** For I say, through the grace given unto me, to every man that is among you, not to think of himself more highly than he ought to think; but to think soberly, according as God hath dealt to every man the measure of faith. **4** For as we have many members in one body, and all members have not the same office: **5** So we, being many, are one body in Christ, and every one members one of another. **6** Having then gifts differing according to the grace that is given to us, whether prophecy, let us prophesy according to the proportion of faith; **7** Or ministry, let us wait on our ministering: or he that teacheth, on teaching; **8** Or he that exhorteth, on exhortation: he that giveth, let him do it with simplicity; he that ruleth, with diligence; he that sheweth mercy, with cheerfulness. **9** Let love be without dissimulation. Abhor that which is evil; cleave to that which is good. **10** Be kindly affectioned one to another with brotherly love; in honour preferring one another; **11** Not slothful in business; fervent in spirit; serving the Lord; **12** Rejoicing in hope; patient in tribulation; continuing instant in prayer; **13** Distributing to the necessity of saints; given to hospitality. **14** Bless them which persecute you: bless, and curse not. **15** Rejoice with them that do rejoice, and weep with them that weep. **16** Be of the same mind one toward another. Mind not high things, but condescend to men of low estate. Be not wise in your own conceits. **17** Recompense to no man evil for evil. Provide things honest in the sight of all men. **18** If it be possible, as much as lieth in you, live peaceably with all men. **19** Dearly beloved, avenge not yourselves, but rather give place unto wrath: for it is written, Vengeance is mine; I will repay, saith the Lord. **20** Therefore if thine enemy hunger, feed him; if he thirst, give him drink: for in so doing thou shalt heap coals of fire on his head.

21 Be not overcome of evil, but overcome evil with good.

13. 1 Let every soul be subject unto the higher powers. For there is no power but of God: the powers that be are ordained of God. **2** Whosoever therefore resisteth the power, resisteth the ordinance of God: and they that resist shall receive to themselves damnation. **3** For rulers are not a terror to good works, but to the evil. Wilt thou then not be afraid of the power? do that which is good, and thou shalt have praise of the same: **4** For he is the minister of God to thee for good. But if thou do that which is evil, be afraid; for he beareth not the sword in vain: for


he is the minister of God, a revenger to execute wrath upon him that doeth evil. ⁵ Wherefore ye must needs be subject, not only for wrath, but also for conscience sake. ⁶ For for this cause pay ye tribute also: for they are God's ministers, attending continually upon this very thing. ⁷ Render therefore to all their dues: tribute to whom tribute is due; custom to whom custom; fear to whom fear; honour to whom honour. ⁸ Owe no man any thing, but to love one another: for he that loveth another hath fulfilled the law. ⁹ For this, you shalt not commit adultery, Thou shalt not kill, Thou shalt not steal, Thou shalt not bear false witness, Thou shalt not covet; and if there be any other commandment, it is briefly comprehended in this saying, namely, Thou shalt love thy neighbour as thyself. ¹⁰ Love worked no ill to his neighbour: therefore love is the fulfilling of the law.

Matthew 5.17-48

¹⁷ Think not that I am come to destroy the law, or the prophets: I am not come to destroy, but to fulfil. ¹⁸ For verily I say unto you, Till heaven and earth pass, one jot or one tittle shall in no wise pass from the law, till all be fulfilled. ¹⁹ Whosoever therefore shall break one of these least commandments, and shall teach men so, he shall be called the least in the kingdom of heaven: but whosoever shall do and teach them, the same shall be called great in the kingdom of heaven. ²⁰ For I say unto you, That except your righteousness shall exceed the righteousness of the scribes and Pharisees, ye shall in no case enter into the kingdom of heaven. ²¹ Ye have heard that it was said of them of old time, Thou shalt not kill; and whosoever shall kill shall be in danger of the judgment: ²² But I say unto you, That whosoever is angry with his brother without a cause shall be in danger of the judgment: and whosoever shall say to his brother, Raca, shall be in danger of the council: but whosoever shall say, Thou fool, shall be in danger of hell fire. ²³ Therefore if thou bring thy gift to the altar, and there rememberest that thy brother hath ought against thee; ²⁴ Leave there thy gift before the altar, and go thy way; first be reconciled to thy brother, and then come and offer thy gift. ²⁵ Agree with thine adversary quickly, whiles thou art in the way with him; lest at any time the adversary deliver thee to the judge, and the judge deliver thee to the officer, and thou be cast into prison. ²⁶ Verily I say unto thee, Thou shalt by no means come out thence, till thou hast paid the uttermost farthing. ²⁷ Ye have heard that it was said by them of old time, Thou shalt not commit adultery: ²⁸ But I say unto you, That whosoever looketh on a woman to lust after her hath committed adultery with her already in his heart. ²⁹ And if thy right eye offend thee, pluck it out, and cast it from thee: for it is profitable for thee that one of thy members should perish, and not that thy whole body should be cast into hell. ³⁰ And if thy right hand offend thee, cut it off, and cast it from thee: for it is profitable for

thee that one of thy members should perish, and not that thy whole body should be cast into hell. ³¹ It hath been said, Whosoever shall put away his wife, let him give her a writing of divorcement: ³² But I say unto you, That whosoever shall put away his wife, saving for the cause of fornication, causeth her to commit adultery: and whosoever shall marry her that is divorced committeth adultery. ³³ Again, ye have heard that it hath been said by them of old time, Thou shalt not forswear thyself, but shalt perform unto the Lord thine oaths: ³⁴ But I say unto you, Swear not at all; neither by heaven; for it is God's throne:

³⁵ Nor by the earth; for it is his footstool: neither by Jerusalem; for it is the city of the great King. ³⁶ Neither shalt thou swear by thy head, because thou canst not make one hair white or black. ³⁷ But let your communication be, Yea, yea; Nay, nay: for whatsoever is more than these cometh of evil. ³⁸ Ye have heard that it hath been said, An eye for an eye, and a tooth for a tooth: ³⁹ But I say unto you, That ye resist not evil: but whosoever shall smite thee on thy right cheek, turn to him the other also. ⁴⁰ And if any man will sue thee at the law, and take away thy coat, let him have thy cloak also. ⁴¹ And whosoever shall compel thee to go a mile, go with him twain. ⁴² Give to him that asketh thee, and from him that would borrow of thee turn not thou away. ⁴³ Ye have heard that it hath been said, Thou shalt love thy neighbour, and hate thine enemy. ⁴⁴ But I say unto you, Love your enemies, bless them that curse you, do good to them that hate you, and pray for them which despitefully use you, and persecute you; ⁴⁵ That ye may be the children of your Father which is in heaven: for he maketh his sun to rise on the evil and on the good, and sendeth rain on the just and on the unjust. ⁴⁶ For if ye love them which love you, what reward have ye? do not even the publicans the same? ⁴⁷ And if ye salute your brethren only, what do ye more than others? do not even the publicans so? ⁴⁸ Be ye therefore perfect, even as your Father which is in heaven is perfect.



ԱՐՏԱՔԱՄԱՆ ԿԻՐԱԿԻ



Արտաքսման Կիրակին մեր նախաձեռնողներուն՝ Ադամին ու Եւային դրախտէն արտաքսման խորհուրդը կը պատմէ: Այս առիթով հակիրճ կերպով պատասխանը կու տանք չորս հարցումներու.

1) Ի՞նչ բանը պատճառ եղաւ որ Ադամ ու Եւա մեղանչեն:

Սատանային հետ երկխօսութիւնը: Սատանան չի կրնար մարդը առաջնորդել մեղքի եթէ երբեք երկխօսութեան մէջ չմտնէ անոր հետ: Ան կը ճանչնայ մարդոց տկարութիւնները, եւ ուստի՝ գիտէ թէ իւրաքանչիւրին հետ ե՛րբ եւ ի՛նչ ձեւով պէտք է երկխօսութեան մէջ մտնէ: Եւային պարագային, օձը, այսինքն՝ Սատանան հարցումով մը սկսաւ անոր հետ երկխօսութիւնը: Եթէ Եւա չպատասխանէր անոր հարցումին կամ անտեսէր զայն, Սատանան պիտի հեռանար իրմէ, գոնէ ժամանակաւորապէս: Երբ Եւա անոր հետ երկխօսութեան մէջ մտաւ, ատիկա իր պարտութեան ու տապալումին առաջին քայլը եղաւ: Բոլոր անոնք որոնք Չարին հետ երկխօսութեան մէջ կը մտնեն՝ անպայման որ կը պարտուին ու կը տապալին:

2) Սատանան ի՞նչ ստիպեց Եւային մեղանչելու:

Ադամ ու Եւա ազատ կամքով ստեղծուեցան, այլ խօսքով՝ անոնք կատարեալ ազատութիւնը ունէին որոշելու իրենց ընելիքը, իրենց առնելիք քայլը: Եւա ազատ էր ծառին պտուղէն ուտելու կամ չուտելու: Սատանան բացատրեց Եւային թէ ի՛նչ պիտի ըլլար եթէ ուտէր ծառէն, բայց չստիպեց որ ուտէ, քանի ստիպելու իշխանութիւն չունէր եւ չունի՛: Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. *«Չարը չի՛ կրնար վնասել մարդուն եթէ մարդը չվնասէ ինքնիրեն»*: Սատանան կրնայ մեղքի փափաք դնել մեր մէջ բայց չի կրնար ստիպել որ մեղք գործենք: Ան իրաւասութիւն ունի փորձելու մեզ, բայց իրաւասութիւն չունի փորձութեան մէջ ձգելու: Մե՛նք է որ մեր ազատ կամքով կ'որոշենք փորձութեան ու մեղքի մէջ իյնալ թէ ոչ: Ան նոյնիսկ չարի՛ք չի կրնար հասցնել մեզի, եթէ մենք վճռած ենք բարին գործել, ինչպէս Պետրոս առաքեալ կ'ըսէ. *«Ո՛վ ձեզի չարիք կը հասցնէ, եթէ դուք բարին գործելու նախանձախնդիր ըլլաք»* (Ա. Պետրոս 3.13):

3) Ինչո՞ւ համար Ադամ ու Եւա արտաքսուեցան դրախտէն:

Ադամին ու Եւային դրախտէն արտաքսման պատճառը՝ իրենց մեղք գործելը չէր, ինչպէս յաճախ կը մտածենք: Կային հիմնական երկու պատճառներ, թէ ինչո՞ւ համար անոնք դուրս դրուեցան դրախտէն.

ա) Իրենց գործած մեղքը չխոստովանիլը: Երբ Աստուած եկաւ փնտոեց Ադամն ու Եւան, անոնք փոխանակ ընդառաջ գային եւ խոստովանէին իրենց ըրածը, ընդհակառակը, փախան եւ *«պարտէզին ծառերուն մէջ պահուեցան»* (Մանդոց 3.8): Աստուած կ'ուզէր որ անոնք յառաջ գային եւ խոստովանէին իրենց ըրածը: Ուստի, Աստուած Ադամն ու Եւան չարտաքսեց դրախտէն որովհետեւ մեղք գործեցին, այլ որովհետեւ չխոստովանեցան իրենց գործած մեղքը: Ասիկա ճշմարիտ է մեզմէ ամէն մէկուս համար: Աստուած գիտէ որ բնութեամբ հողեղէն ենք, եւ ուստի՝ մա՛րդ ենք, տկա՛ր ենք, եւ ենթակայ սայթաքումներու. ահա թէ ինչու, ան մեզ չի դատապարտեր եթէ մեղք գործենք, բայց անկասկած որ պիտի դատապարտէ եթէ չխոստովանինք մեր գործած մեղքերը: Օգոստինոս կ'ըսէ. *«Մեր վրայ դատապարտութիւն բերողը՝ մեղք գործելը չէ, այլ՝ մեր գործած մեղքերը չխոստովանիլը»*: Իսկ Ոսկեբերան Հայրապետը կ'ըսէ. *«Մեր մեղքերը չեն կրնար մեզ գեհեհի կրակին մէջ նետել, եթէ երբեք խոստովանութեամբ շիջեցնենք կրակը մեր մեղքերուն»*:

բ) Անոնց դրախտէն արտաքսուելուն երկրորդ պատճառը՝ իրենց յանցագործութեան դրդապատճառը ուրիշին վերագրելն էր, այլ բացատրութեամբ մը՝ իրենց ըրածին համար ուրիշը մեղադրելը: Ադամ մեղադրեց կինը, իսկ կինը՝ մեղադրեց Օձը: Խորքին մէջ սակայն երկուքն ալ անուղղակիօրէն զԱստուած է որ մեղադրեցին: Ադամ Աստուծոյ ըսաւ. *«Այն կինը, որ ինձի հետ ըլլալու տուիր, ա՛ն ինձի տուաւ ծառէն ու ես կերայ»* (Մանդոց 3.12): Իր այս խօսքով, ան ըսել կ'ուզէր. *«Ո՛վ Աստուած, եթէ դուն ինձի կինը տուած չըլլայիր՝ ես մեղքի մէջ պիտի չիյնայի»*: Իսկ երբ Եւային հարցուց թէ ինչո՞ւ այդպէս ըրաւ, Եւա ըսաւ. *«Օձը զիս խաբեց ու ես կերայ»* (Մանդոց 3.13): Իր այս խօսքով, Եւա ըսել կ'ուզէր. *«Եթէ Օձը զիս չխաբէր՝ ես մեղքի մէջ պիտի չիյնայի: Եթէ դուն, ո՛վ Աստուած, Օձը ստեղծած չըլլայիր, կամ եթէ զինք գոնէ այդքան խորամանկ ստեղծած չըլլայիր՝ ան պիտի չկրնար զիս խաբել»*:

Այսօր երբ մենք մեղք գործենք կամ սխալ մը ընենք, արդեօք Ադամի ու Եւայի վերաբերմունքը չե՞նք որդեգրեր, այլ խօսքով՝ մեր գործած մեղքին պատճառը կամ դրդապատճառը ուրիշը չե՞նք սեպեր: Երբ դժբախտութեան մը կը հանդիպինք, ուրիշը չե՞նք նկատեր պատճառն ու հեղինակը մեր դժբախտութեան: Ադամի ու Եւայի կեանքի փորձառութենէն սորվինք, որ ուրիշը մեղադրելով ու յանցաւոր հանելով՝ ոեւէ մէկը չի կրնար արդարանալ:

4) Ի՞նչ էր դրախտը որմէ արտաքսուեցան Ադամն ու Եւան:

«Դրախտէն արտաքսուիլ» բացատրութեամբ, պէտք չէ հասկնալ Ադամին ու Եւային փոխադրուիլը նիւթական վայրէ մը դէպի այլ նիւթական վայր մը: Ճիշդ է որ դրախտը նիւթական պարտէզ մըն էր, եւ կը գտնուէր Եդէմի մէջ (Մանդոց 2.8, 3.24), բայց այս պարագայիս, դրախտէն արտաքսուիլը՝ պարզապէս Աստուծոյ ներկայութենէն դուրս դրուիլ կը նշանակէ: Ադամ ու Եւա մնայուն կերպով Աստուծոյ ներկայութեան մէջ կ'ապրէին, Աստուծոյ հետ հայր եւ զաւակի քաղցր ու մտերիմ յարաբերութեան ու հաղորդակցութեան մէջ էին. դրախտէն դուրս դրուիլը՝ Աստուծոյ հետ իրենց այս ունեցած սիրալիր յարաբերութեան ու հաղորդակցութեան դադրեցումն էր: Այս իրողութիւնը մեզի կը յիշեցնէ, թէ պատուիրանազանց ու մեղքի կեանք ապրող մարդը, չի կրնար մնալ ու ապրիլ Աստուծոյ ներկայութեան մէջ, չի կրնար Աստուծոյ հետ անկեղծ յարաբերութեան ու հաղորդակցութեան մէջ ըլլալ:

Վերջապէս

Արտաքսման տօնին առիթով, եկէք մեր կեանքէն արտաքսենք ամէն մեղք ու մոլութիւն որ կրնայ մեզ հեռացնել Տիրոջմէ, եւ ընդունինք ամէն առաքինութիւն որ կրնայ մեզ մօտեցնել Տիրոջ:



ՏՕՆԵՐ

17 Փետրուար 2018

Սուրբ Թեոդորոս Զօրավարի Յիշատակութեան Օր

Ս. Թեոդորոս զօրավարը համաքրիստոնէական սուրբ է, որուն յիշատակութիւնը Հայ Առաքելական եկեղեցին կը տօնէ Մեծ Պահքի առաջին շաբաթ օրը: Ըստ վարքագիրներու՝ ան ծնած էր Ամասիա քաղաքի Սարու գիւղին մէջ եւ ունեցած էր Քրիստոնէայ բարեպաշտ



ծնողներ: 4-րդ դարու սկզբին, Դիոկղետիանոսի հալածանքներու ժամանակ, ապացուցելու համար կոռնքերու հնարովի եւ կեղծ ըլլալը, գիշերով կրակի կը մատնէ հեթանոսական Ռեա չաստուածուհիին մեհեանը: Այս արարքին համար բանտ նետուած է եւ մեծագոյն չարչարանքներէն յետոյ 306 թուականին կը նահատակուի՝ այրուելով կրակի վրայ: Ս. Թեոդորոս զօրավարը յայտնի է նաեւ, որպէս վիշապասպան, որ քաջութեամբ ու հաւատքով կը յաղթէ հսկայ վիշապի: Օտար եկեղեցիներուն մէջ յայտնի է նաեւ «Դիոն» անուանումով, որ Յունարէն կը նշանակէ «նորեկ» զինուոր:



18 Փետրուար 2018 Արտաքսման Կիրակի

Մեծ Պահքի երկրորդ Կիրակին կը կոչուի նաեւ Արտաքսման: Օրուայ խորհուրդին եւ անուան մասին Աստուածաշունչ մատենի Ծննդոց Գիրքին մէջ գրուած է. «...Եւ արտաքսեց անոր Աստուած Եդէմի պարտեզէն, որպէսզի մշակէ հողը, որմէ եւ ստեղծուած էր»: (Ծննդ. 3:23):

Նախապատմութիւնը հետեւեալն է. մարդը ունկնդիր ըլլալով Սատանայի խաբէբայական խօսքերուն, պատուիրանազանց գտնուելով՝ համտեսց արգիլուած պտուղէն: Որպէս պատիժ, մարդը ի հարկէ, անմիջապէս չմահացաւ, սակայն զրկուեցաւ Աստուծոյ կողմէ շնորհուած անմահութենէն եւ անիծուեցաւ: Այսուհետեւ, մարդը իր քրտինքով պէտք է վաստակի օրուայ հացը եւ կինը պէտք է ցաւով ու տառապանքով զաւակ ունենայ եւ վերջն ալ ըսուած է անոր . «...հող էիր եւ հող կը դառնաս» (Ծննդ.3.19):

Եկեղեցական հայրերը իմաստուն կերպով Զառասնորդաց Պահքի շրջանի Կիրակիները այնպէս դասաւորած են եւ այնպիսի անուանումներ ու խորհուրդներ տուած, որոնցմով ի յայտ կու գայ մարդկութեան կեանքի ուղին՝ ծնունդ, մեղսագործութիւն, զոջում, ապաշխարանք: Սա ինքնին մարդուն խորհելու եւս մէկ առիթ է սեփական անձին անդրադառնալու, պահոց շրջանը արդիւնաւետ անցնելու համար:



Holidays

February 17, 2018

Commemoration of St. Theodoros the Captain

St. Theodoros the Captain is a Saint recognized by all traditional churches of Christendom. The Armenian Church commemorates this Saint on the first Saturday during the period of Great Lent. According to hagiographers, St. Theodoros was born to God-fearing and pious parents in the village of Saroo, near the town of Amasia. He was a soldier in the Roman Army, and rose through the ranks, eventually becoming a Captain.

In the beginning of the fourth century, Rome was under the rule of the Emperor Diocletian. Instead of worshipping at the temple of the pagan goddess Rea, as he had been instructed to, St. Theodoros burns the temple to the ground, thus demonstrating that pagan idols were false. For this act, Diocletian imprisons St. Theodoros, and he suffers severe tortures. In the year 306 A.D., he is martyred by being set on fire.

St. Theodoros is also known as the “Slayer of the Dragon”, as he was said to have defeated a great and mighty dragon due to his courage and faith.



February 18 - Sunday of Expulsion

The second Sunday of the period of Great lent is called the Sunday of Expulsion. The basis of the mystery of and the name of the day can be found in the Holy Bible, the Book of Genesis: “So the Lord God sent him out of the Garden of Eden and made him cultivate the soil from which he had been formed” (Genesis 3:23). Prehistory is the following. The human being, listening to the deceitful words of Satan, disobeyed the divine commandments and ate the forbidden fruit, As punishment the human being, the human being, of course, didn't die at

once, but was deprived of the eternity granted by God and was cursed. Since then man must work hard and sweat to make the soil produce enough food, and woman will have pain in giving birth to her offspring. And in the end God said to the human being: "You were made from soil and you will become soil again" (Genesis 3:19).

The church Fathers have given the Sundays of the Period of great Lent such names and mysteries which symbolize the mankind's way of life – birth, sinning, regret and repentance. This should serve for the human being as an occasion for thinking of himself/herself and his/her life so that the period of great Lent should be fruitful and productive.



ROMANS 8:28, 31

AND WE KNOW THAT ALL THINGS
WORK TOGETHER FOR GOOD TO THEM
THAT LOVE GOD, TO THEM WHO ARE
THE CALLED ACCORDING TO HIS
PURPOSE. WHAT SHALL WE THEN SAY
TO THESE THINGS? IF GOD BE FOR US,
WHO CAN BE AGAINST US?

Հսկումի Խաղաղական Եւ Հանգստեան Ժամերգութիւն

Չորեքշաբթի, 14 Փետրուար 2018-ին, երեկոյեան ժամը 7-ին, Հսկումի խաղաղական եւ հանգստեան ժամերգութեան հանդիսապետեց եւ քարոզեց Գանատահայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Ս. Աբգար Եպս. Յովակիմեան: Արարողութեան ներկայ էին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան եւ Միսիսոկայի Ս. Վարդան Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Միւռնոն Քինյ. Սարգիսեան: Արարողութիւնը կատարուեցաւ կանոնաւոր եւ խորհրդաւոր երգեցողութեամբ քահանայ հայրերու եւ դպիրներու կողմէ, որուն շնորհիւ հաւատացեալները ըմբռնեցին եւ ունեցան հոգեւոր բաւարարուածութիւն:



Սրբազան Հօր պատգամը գլխաւորաբար կը վերաբերէր Բուն Բարեկենդանի տօնին եւ որուն կը յաջորդէր Մեծ Պահքի շրջանը: Սրբազան Հայրը բացատրեց թէ հին աւանդական սովորոյթներու համաձայն պահեցողութիւնը կապուած էր մկրտութեան խորհուրդին հետ եւ սովորաբար մարդիկ իրենց կը մկրտուէին Մեծ Պահքի շրջանին, հետզհետէ այդ սովորոյթները ժամանակի ընթացքին կրելով որոշ ազդեցութիւններ փոխուած են ներկայի մէջ:

Սրբազան Հօր պահպանիչով ժողովուրդը արձակուեցաւ եւ ուղուեցաւ դէպի «Վաչէ Յովսէփեան» սրահ, ուր հանգուցեալներու յիշատակին համար պատրաստուած էր Պահոց Ընթրիք, Տիգրանեան ընտանիքի հիւրընկալութեամբ:

Հաւատացեալները վայելեցին Տիգրանեան ընտանիքի կողմէ պատրաստուած պահեցողական համեղ կերակուրները, իրենց յարգանքը մատուցելով Տիգրանեան գերդաստանի համայն ննջեցելոց հոգիներու խաղաղութեան համար:

Wednesday Night Lenten Vigil Prayer Services

On Wednesday, February 14, 2018 at 7:00 pm, Lenten Vigil services performed by His Grace Bishop Abgar Hovakimian, Primate of the Armenian Holy Apostolic Church Canadian Diocese, accompanied by Rev. Arch. Fr. Yeghia



Kervanjyan, Pastor of the St-Gregory the Illuminator Armenian Cathedral and Rev. Fr. Myron Sarkissian, Pastor of St-Vartan Armenian Holy Apostolic Church of Mississauga. Parishioners enjoyed the hymns performed by priests and acolytes.

The message of Bishop Abgar Hovakimian referred to the Armenian Feast of Poon Paregentan, followed by the Great Lent Period. He explained that according to our ancient Armenian religious traditions, the Great Lent was associated with the Baptismal Ceremony. Therefore, the people were performed their baptisms during the Great Lent Period, these habits were gradually changed by certain influences.

After the ceremony a memorial Lent lunch was held in 'Vatche Hovsepian' hall hosted by Dikranian Family.



Armenian Lenten Services

The Peace Service, Rest Service and Sunrise Service are performed more often during Great Lent than at other times of the year. (Usually, Peace and Rest Services are performed only on Friday evenings.) These three services are part of the Church's cycle of seven daily worship services but are of particular significance during Great Lent because they are penitential in nature and remind us of the effort we are making to restore our pure and joyous relationship with God.

The evening Peace Service consists of prayers for peace to end each day. These prayers remind us that God is with us even in the face of trial and temptation. The Rest Service, which comes just before retiring for the night, asks God's continuing care through the night. It includes the prayer of St. Nersess.

The Sunrise Service, performed first thing in the morning, reminds us that God is the giver of the light of morning and the light of salvation. Its beautiful prayers and hymns reflect the fresh and serene quality of the most beautiful time of day. This service is performed in our churches before or after Sunday morning liturgy.



**Սիրելի հաւատացեալներ,
Անոնք որոնք կը փափաքին, որ
Հոգեւոր հովիւը այցելութիւն
կատարէ իրենց հիւանդ
ընտանեկան պարագաներուն կամ
հարազատներուն, Եկեղեցւոյ Հովիւը՝**

**Արժ. Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան պատրաստ
անմիջականօրէն իր այցելութեամբ ընդառաջելու
ձեր փափաքին:**

**Հաճեցէք կապ պահել՝ Տէր Հօր հետ
հեռաձայնելով՝ (514) 241-9347 կամ
Եկեղեցւոյ գրասենեակ
(514) 279-
3066**



FAMILY PRAYER

*God made us a family
We need one another
We love one another
We forgive one another
We work together
We play together
We worship together
Together we use God's word
Together we grow in Christ
Together we love all men
Together we serve our God
Together we hope for Heaven
These are our hopes and ideals
Help us to attain them,
O God, Through Jesus Christ
our Lord*

Dear
Parishioners,
If you have
family members or relatives that you wish to
have spiritual support, our Pastor Arch. Fr.
Yeghia Kervanjan is ready to fulfill your wish
and visit them, when and where is needed.

**Please feel free to contact Der Yeghia directly
at (514) 241-9347
or call the secretariat of the Church at (514)
279-3066**



ՏՆՕՐՀՆԷՔԻ ԱԲԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ



Տնօրհներք փափաքող
հաւատացեալները
կրնան հեռաձայնել Տ. Եղիա Ա. Քհնյ.
Քերվանճեանին՝

(514) 241-9347 կամ

Եկեղեցւոյ գրասենեակ՝

(514) 279-3066

The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.


At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing, please contact with Fr. Yeghia

at (514) 241- 9347 or church office at (514) 279-3066.



Աստուածաշունչի Սերտոդուրթիւն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ



Եկէ՛ք միացէք մեզի
ամեն Զինգշաբթի երեկոյեան ժամը
7:00-ին, մասնակից ըլլալու մեր
հետաքրքրական Աստուածաշունչի
Նիւթերուն եւ ընկերային
միջավայրին:



Աստուածաշունչի սերտոդուրթեան
խումբը՝ ընկերային ջերմ
մթնոլորտի մէջ հաճելի ժամանակ
կ'անցնէ, Տ. Եղիա Ա. Զհնյ.
Քերվանճեանի՝ բժախնդրօրէն
պատրաստած
Աստուածաշնչական նիւթերու
հետաքրքրական ճոխ
գիտելիքներով:





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ
քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



**Attention to our beloved parishioners,
If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.**

Thank you for your cooperation.

Pastor and Parish Council

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹՅՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of January 2018
have been received with great appreciation***



CHURCH:

**Manoir Gouin Seniors \$137,
Mr. & Mrs. Carlo Pilafian \$60.**

GET WELL:

Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen \$160.

ELEVATOR FUND:

Mr. & Mrs/ Aret Tasciyan \$100.

CHILD BLESSING:

**Mr. & Mrs. Robert & Zarouhi Kechayan \$60,
Mr. & Mrs. Alex Darian \$50.**

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

**THE LATE MAKRUHI OZTURSUCUYAN
Mr. & Mrs. Berdj & Ani Emirze \$150,**

**Ms. Irma Elmokyan \$100,
Mr. & Mrs. Garbis & Silva Ferah \$40,
Mr. & Mrs. Antranik & Armine Sirinyan,
Mr. & Mrs. Minas & Verjine Asaduryan \$30.**

HOKEHANKISD:

THE LATE PAPKEN SIRINYAN

**Mr. & Mrs. Antranik & Armine Sirinyan \$100,
Dr. & Mrs. Arto & Sona Demirjian \$50,
Mrs. Mayranus Ozoglu \$20.**

THE LATE LENA DERKEVORKIAN:

TECSYS INC. STAFF \$200.


THE LATE HOVSEP & BERJUHI EGIAN

Hasmik & Nazeli Egian \$50.



ՀՈԳԵՀԱՆՔՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 18 Փետրուար 2018



Տիկ. ՍԵԼԱՆ Օհանեանի,
Տ. եւ Տիկ. Ռաֆֆի եւ Ժպիտ Ֆրունճեանի եւ զաւակներուն,
Տիար Արա Օհանեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՕՅԱՆԵԱՆԻ
(ANTRANIG OHANIAN)

մահուան առաջին տարելիցին առիթով



Սուրբիաս եւ Տեմիրճեան գերդաստաններու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝

ԴՊՐԱՅ ԴԱՍԻ
ԱՆԴԱՄ՝

ՄՈՎՍԵՍ ԲՈՉԱԲԵԱՆԻ
(MOVSES KOCAYAN)

մահուան առաջին տարելիցին առիթով



Ս. Գրիգոր Լուսավորիչ

Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ 2018 Տարեշրջանի Տօնացոյց



ՄԱՅՐ ՏԱՃԱՐ Ամիս	Օր	Ձեռնարկ
	21, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հսկում Պահոց Ընթրիք Փառանձեմ եւ Շողիկ Գրիգորեան
	28, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հսկում Պահոց Ընթրիք Թեքեան Սշակութային Միութիւն
Մարտ	4, Կիրակի	Տարեկան Անդամական Ընդհանուր Ժողով
	7, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին	Հսկում Միջինք Պահոց Ընթրիք – Շողիկ եւ Փառանձեմ Գրիգորեան

	<p>10, Շաբաթ Առաւօտեան ժամը 11:00- ին</p>	<p>Արեւագալի Ժամերգութիւն եւ Միջինքի հիւրասիրութիւն</p>
	<p>14, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին</p>	<p>Հսկում Պահոց Ընթրիք Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Ընտանիք</p>
	<p>17, Շաբաթ</p>	<p>Ս. Գրիգոր Լուսւորիչի Վիրապ Մտնելու Յիշատակութեան Օր</p>
	<p>21, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին</p>	<p>Հսկում Պահոց Ընթրիք Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք</p>
	<p>25, Կիրակի</p>	<p>Ծաղկազարդ</p>
	<p>29, Հինգշաբթի</p>	<p>Աւագ Հինգշաբթի Ոտնլուայ Երեկոյեան ժամը 7:00-ին Աւագ Հինգշաբթիի Ընթրիք Տիկնանց Յանյնախումբ «Մարի Մանուկեան» սրահ Խաւարման Գիշեր</p>

	30, Աւագ Ուրբաթ	Կարգ Թաղման Երեկոյեան ժամը 7- ին
	31, Շաբաթ	«Ճրագալոյց» Ս. Չատկուայ
Ապրիլ	1, Կիրակի	Ս. Չատիկ Չատկուայ Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	2, Երկուշաբթի	Մեռելոց Յոգեհանգիստ
	24, Երեքշաբթի	Մեծ Եղեռնի Յիշատակի Օր
Մայիս	10, Հինգշաբթի	Համբարձման Տօն «Մարի Մանուկեան» Ճաշկերոյթ եւ վիճակ
	13, Կիրակի	Մայրերու Օր
	25, 26, 27 Ուրբ., Շբթ., Կիր.	35-րդ. Պատգամաւորական Ժողով Ս. Վարդան Եկեղեցւոյ մէջ Վանքովըր
Յունիս	3, Կիրակի	Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսաւորչի Ելն ի Վիրապէն Եկեղեցւոյ Անուանակոչութիւն

		Մատաղօրհներ
Յուլիս	8, Կիրակի	«Պայծառակերպութիւն» Խաչալուայ Զրօրհներ Վարդավառ
	9, Երկուշաբթի	Մեռելոց Հոգեհանգիստ
Օգոստոս	12, Կիրակի	Տօն «Վերափոխում» Ս. Աստուածածնի Խ աղոթօրհներ – (ճաշկերոյթ) Ս. Մանուկեան
Սեպտեմբեր	9, Կիրակի	Ս. Խաչվերաց Մատաղ Վաչէ Յովսէփեան սրահ
	21, Ուրբաթ	Հայաստանի Հանրապետութեան 25-րդ Տարեդարձ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պագար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	Թուականը յաջորդիւ	«Կոմիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ

Դեկտեմբեր	2, Կիբակի	Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Խրախճանք CFFA «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ





Եկեղեցւոյ Ձեռնարկներ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ
Աստուածաշունչի Սերտողութիւն
Հինգշաբթի օրերուն երկոյեան ժամը 7-ին, Տ. Եղիա Ա. Քհնյ.
Քերվանճեանի ուղղեկցութեամբ
Կիրակնօրեայ Վարժարան
Կիրակի, առաւօտեան ժամը 11-էն սկսեալ
Ուսուցչուհի Շողիկ Գուշաքճեանի հետ

CHURCH UPCOMING EVENTS

Bible Study
Every Thursday at 7:00 pm led by
Arch. Fr. Yeghia Kervanjyan
Sunday School
Every Sunday at 11:00 am
with Shoghig Koushakjian, Teacher



**ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՅԱՆՈՒՐ
ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ
ANNUAL GENERAL
MEMBERSHIP MEETING**

ԿԻՐԱԿԻ, 4 ՄԱՐՏ 2018

Պատարագէն ետք, կ.ե. ժամը 1:30-ին

SUNDAY, MARCH 4, 2018

Following the Divine Liturgy at 1:30 PM

615, Stuart Avenue, Outremont, QC



Lancement du Groupe Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont



Nous vous invitons à vous joindre à notre nouvelle Chorale d'Enfants « Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont » (âge d'inscription 7 à 15 ans).



Les pratiques débuteront dimanche le 14 janvier 2018, à l'Église St-Grégoire l'Illuminateur, situé au 615 Av. Stuart à Outremont et auront lieu de 13h00 à 14h00. Elles se poursuivront par la suite tous les dimanches selon ce même horaire.

Les cours seront donnés par le professeur Karen Manucharyan diplômé du Conservatoire de Yerevan, en Arménie, qui assumera la direction de cette chorale.

**Les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège
Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.**

La participation est gratuite. Venez nombreux participer à cette expérience enrichissante!

**Pour des informations additionnelles,
svp vous adresser au
(514) 279-3066 ou à stgregorychurch@gmail.com**

Conseil paroissial



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մանկական Երաժշտական Խումբ



Ձեզ կը հրաւիրենք միանալու մեր նոր մանկական երգչախումբին «Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont» - (գրանցման տարիք 7-15 տարեկան):



Փորձերը կը սկսին Կիրակի, 14 Յունուար 2018, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 1:00 2:00 - հասցէ 615 Stuart Avenue Outremont-ի մէջ:

Փորձերը պիտի շարունակուին կատարուիլ ամէն Կիրակի, վերոյիշեալ նոյն ժամուին:

Դասընթացքները պիտի կատարէ Երեւանի երաժշտանոցէն շրջանաւարտ, Կարէն Մանուչարեան, որ կը ստանձնէ նաեւ՝ երգչախումբին ղեկավարութիւնը:

Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նորթները, եւ միաժամանակ մշակելով անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:

Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Ղայերէն լեզուներով:

Մասնակցութիւնը անվճար է: Եկէ՛ք եւ օգտուեցէք այս պատեհ առիթէն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել (514)279-3066 կամ stgregorychurch@gmail.com

Ծիական Խորհուրդ



ԽԱՂԱՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

*Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին
(Փետրուար 14 – Մարտ 29)*

Փետրուար 14 – Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան
*Առաջնորդ Գանատահայոց Թեմի
Պահոց Ընթրիք – Տիգրանեան Ընտանիք*

Փետրուար 21 – Արժ. Տ. Միլոն Բիւյ. Սարգիսեան
*Հոգեւոր Հովիւ- Միսիսոկայի Ս. Վարդան Հայց. Առաք. Եկեղեցւոյ
Պահոց Ընթրիք – Փառանձեմ եւ Շողիկ Գրիգորեան*

**Փետրուար 28 – Արժ. Տ. Կոմիտաս Բիւյ.
Միրզախանեան**
*Հոգեւոր Հովիւ- Լաւալի Ս. Խաչ Հայց. Առաք Եկեղեցւոյ
Պահոց Ընթրիք – Թէքէեան Սշակութային Միութիւն*

Մարտ 7

Պահոց Ընթրիք – Ասպետ եւ Միրնա Պաճաքեան

Մարտ 14

Պահոց Ընթրիք – Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Ընտանիք

Մարտ 21 – Արժ. Տ. Վազգէն Բիւյ. Պոյաճեան
Պահոց Ընթրիք – Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք

Մարտ 29 – Աւագ Հինգշաբթի

*Աւագ Հինգշաբթի Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ
«Մարի Մանուկեան» սրահին մէջ*



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Կիրակի, 10 Սեպտեմբեր 2017

SUNDAY SCHOOL

On Sunday, September 10, 2017

For the ages of 6-12 years old children

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մեջ կը սորվին Սաղմոսներ եւ երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Տէր Եղիա Ա Քհնյ. Զերվանճեանին (514) 241-9347



In a pleasant and friendly atmosphere, the children will learn Psalms & songs, develop Armenian language skills, & introduce to Armenian history.

Fun & fascinating consecutive Fieldtrips

For more information and registration call to the Church office (514) 279-3066

Archpriest Fr. Yeghia Kervanjian (514)241-9347

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjian: (514)241-9347
E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԴՊՐԱՅ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսալորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

Կը յայտնեն թէ իսկ սկսած են դպրաց
պատրաստութեան
Հանդիպումները

Այն պատանիներն ու երիտասարդները,
որոնք կը փափաքին ծառայել
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել
Ս. Գրիգոր Լուսալորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը
խնդրենք

հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241-9347
Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066:

Հոգեւոր Հովիւ
Տէր Եղիա Ա Քհնյ. Քերվանճեան

ՄԱՅՐ ՏԱԾԱՐ



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի
կ'ունենան ամէն Զինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն
ու մասնակցութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ եւ
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

S. Եղիա Ա Քհնյ. Բերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հասարացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.